ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԱՐՓԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

2017 - 2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

Կազմել է՝ համայնքի ղեկավար _____ Մ. Ղարիբյան

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 28-ի

թիվ 18-Ն որոշմամբ

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք 3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն 3
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն 3
2.2. Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը 5
2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը 7
2.4. Համայնքի ֆինանսական վիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները 7
2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ 8
2.4 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն 9
3 Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում 10
3.1 Համայնքի զարգացման տեսլական 10
3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակներ 10

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Հարգելի համագյուղացիներ,

Արփի խոշորացված համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը համայնքի կարևորագույն փաստաթուղթն է, որի առաջնային նպատակն է բազմակողմանի ու հանգամանալից քննարկումների արդյունքում վեր հանված համայնքային խնդիրներին տալ լուծումներ՝ դրանով իսկ բարելավել համայնքում կյանքի որակը: Այն առաջին հերթին ուղղված է համայնքի սոցիալ-տնտեսական վիճակի, համայնքային ծառայությունների որակի բարելավմանը: Ծառայությունները բազմաբնույթ են և դրանց որակական փոփոխության համար անհրաժեշտ է շարունակել մեր հետևողական աշխատանքը, բազմապատկելով ջանքերը և եռանդը: Մեծապես կարևորում եմ մասնակցային գործընթացները համայնքային հիմնախնդիրների վերհանման և քննարկման ժամանակ: Այն հիմնախնդիրները, որոնք արդեն իսկ քննարկվել են տարբեր խմբերում, հիմք են հանդիսացել 2017-21թթ. հնգամյա զարգացման ծրագրի մշակման համար, կարևորվել են դրանց առաջնահերթությունները, գնահատվել են առկա հնարավորությունները: Միաժամանակ պետք է նշեմ, որ ծրագիրը պետք է լինի ճկուն, պարբերաբար վերանայվի և լրամշակվի: Զարգացման հնգամյա ծրագիրը հիմք է հանդիսանալու համայնքի տարեկան ծրագրերի և բյուջեների մշակման և կատարման աշխատանքները կազմակերպելիս: Ելնելով ծրագրի ռազմավարությունից և ընդհանուր նպատակներից, շատ կարևոր է սեփական եկամուտների լրացուցիչ աղբյուրներ գտնելը, ֆինանսական միջոցների արդյունավետ հավաքագրման կազմակերպումն ու նպատակային օգտագործումը: Համայնքի խնդիրների լուծումը հնարավոր է միայն համատեղելով պետության, միջազգային կազմակերպությունների և համայնքի հնարավորությունները:

Հարգելի համագյուղացիներ, միայն բոլորիս շահագրգիռ և սրտացավ մոտեցմամբ է հնարավոր լուծել համայնքի խնդիրները: Յուրաքանչյուրիցս է կախված, թե ինչպիսի համայնք կունենանք 5 տարի անց: Վստահ եմ, որ համատեղ աշխատանքի դեպքում մեր հաջողությունը ապահովված է:

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Արփի խոշորացված համայնքը ձևավորվել է 2016թ.-ի սեպտեմբերին: Նրա մեջ ընդգրկված են 9 բնակավայր: Համայնքի կենտրոնը Բերդաշեն բնակավայրն է: Ստորև ներկայացված աղյուսակը և դիագրամները տրամադրում են յուրաքանչյուր համայնքին վերաբերող ընդհանուր ժողովրդագրական տվյալներ, հողերի չափը և հեռավորությունը Գյումրիից:

Բնակավայրի անվանումը	Վարչական տարածքը	Ընդհանուր բնակիչների թիվը	Հեռավորությունը Գյումրիից
Բերդաշեն	3499	378	38
Ալվար	3348	279	44
Աղվորիկ	1997	143	42
Արդենիս	1727	211	46
Գառնառիճ	7500	323	37
Զարիշատ	6124	77	40
Զորակերտ	3174	221	50
Ծաղկուտ	5531	247	45
Շաղիկ	5461	111	56
Ընդհանուր	**38361**	**1990**	

Համայնքի սեռական կազմը



Համայնքի տարիքային կազմը



2.2. Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը

Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 70,518,664 ՀՀ դրամ 2016թ.-ի դրությամբ: Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը

կազմում է 36%, որը հիմնականում ձևավորվում է բնակավայրերի հողային և գույքային հարկերից:

Հիմնական գյուղատնտեսական արտադրանքի ծավալները

Բնակավայր	Արտադրանք	Ծավալը (տարեկան) տոննա
Բերդաշեն	Կարտոֆիլ	14
	Գարի	30
Ալվար	Կարտոֆիլ	15
	Ցորեն	2
	Գարի	30
Աղվորիկ	Կարտոֆիլ	15
	Ցորեն	2
	Գարի	6
Արդենիս	Կարտոֆիլ	15
	Գարի	30
Գառնառիճ	Կարտոֆիլ	8
	Գարի	10
Զարիշատ	Կարտոֆիլ	5
	Ցորեն	20
	Գարի	12.6
Զորակերտ	Կարտոֆիլ	5
	Գարի	20
Ծաղկուտ	Կարտոֆիլ	6.2
	Գարի	40
Շաղիկ	Կարտոֆիլ	20
	Գարի	5.5

Ձեռնարկություններ

Համայնքի տարածքում գործում են 5 ձեռնարկություններ, որոնցում զբաղվածների թիվը կազմում է 11 հոգի, այդ թվում՝ 4 մանրածախ առևտրի օբյեկտ, 1 վերամշակող ձեռնարկություն:

Կրթական հաստատություններ

Անվանում	Սովորողների թիվ	Աշխատողների թիվ
Ալվարի միջնակարգ դպրոց	8	14
Բերդաշենի միջնակարգ դպրոց	52	21
Գառնառիճի միջնակարգ դպրոց	45	21
Զորակերտի միջնակարգ դպրոց	15	11
Ծաղկուտի միջնակարգ դպրոց	25	13
Զարիշատի հիմնական դպրոց	6	6

Շաղիկի հիմնական դպրոց	7	9
Արդենիս միջնակարգ դպրոց	18	7
Աղվորիկ միջնակարգ դպրոց	17	6

Առողջապահական հիմնարկներ

Բնակավայր	**Տեսակ**	**Քանի հոգու համար է նախատեսված**	**Տարեկան այցելուների թիվը**
Ալվար, Արդենիս, Բերդաշեն, Գառնալիճ, Զարիշատ, Զորակերտ, Ծաղկուտ, Շաղիկ	Բուժակ-մանկաբարձական կետ	-	-

Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ

	Տնային տնտեսությունների թիվը	**Ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված**	**Տոկոսը**
Ալվար	33	1	3,03%
Աղվորիկ	20	0	0,00%
Արդենիս	56	0	0,00%
Բերդաշեն	60	4	6,67%
Գառնառիճ	60	8	13,33%
Զարիշատ	36	0	0,00%
Զորակերտ	34	1	2,94%
Ծաղկուտ	42	0	0,00%
Շաղիկ	33	3	9,09%
Ընդամենը	**374**	**17**	**4,55%**

2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը

Զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և գործարարների համատեղ գործունեությունը:

2.4. Համայնքի ֆինանսական վիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

Արփի բազմաբնակավայր համայնքի եկամուտների զգալի մասը (շուրջ 64%) ձևավորվում է պետական բյուջեից համայնքին տրամադրվող ամենամյա դոտացիաներից: Ուստի համայնքի եկամուտների փոփոխությունը մեծապես պայմանավորված է նշված դոտացիայի չափից: Հաշվի առնելով Արժույթի միջազգային հիմնադրամի կանխատեսումները Հայաստանի

տնտեսական աճի վերաբերյալ (ՀՆԱ-ի աճը՝ 3.4% 2017թ.-ին և 4% 2021թ.-ին)[1]ակնկալվում է, որ պետական մակարդակով շոշափելի փոփոխություններ տեղի չեն ունենա դոտացիայի ավելացման առումով:

Մյուս կողմից եկամուտները կարող են փոխվել, եթե համայնքում գանձվող հարկերի չափն ավելանա: Քանի որ ծրագիրը ներառում է գույքի և հողային հարկերի գանձման արդյուտավետության բարձրացման ռազմավարություն, ակնկալվում է, որ դրա շնորհիվ մոտակա հինգ տարիների ընթացքում համայնքի եկամուտները որոշակիորեն կավելանան: Սույն կանխատեսումը մանրամասնորեն ներկայացված է ստորև բերված աղյուսակում:

Եկամուտներ	2017 նախ.	2018 կանխ.	2019 կանխ.	2020 կանխ.	2021 կանխ.
Ընդհանուր եկամուտների չափը	**70,518.70**	**74,392.64**	**80,789.34**	**85,692.35**	**91,085.15**
Դոտացիա	**31,779.30**	**31,779.30**	**31,779.30**	**31,779.30**	**31,779.30**
Սեփական եկամուտներ	**38,739.40**	**42,613.34**	**49,010.04**	**53,913.05**	**59,305.85**
Ընդամենը գույքահարկ	14,551.00	16,006.10	18,407.02	20,247.72	22,272.49
Ընդամենը հողի հարկ	9,202.00	10,122.20	11,640.53	12,804.58	14,085.04
Ոչ հարկային եկամուտներ	14,966.40	16,463.04	18,932.50	20,825.75	22,908.32
Տեղական տուրքեր	20.00	22.00	30.00	35.00	40.00

2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Համայնքի զարգացման հիմնական դժվարություններից մեկն է հանդիսանում տրանսպորտային ցանցի բացակայությունը: Այն խոչընդոտ է հանդիսանում հետևալ խնդիրների լուծման համար՝

- Համայնքի գյուղատնտեսների հասանելիությունը անհրաժեշտ սպառման շուկաներին,
- Համայնքի բնակիչների՝ այլ բնակավայրում գտնվող բուժհաստատությունից օգտվելը,

Գյուղատնտեսական ձեռներեցության զարգացման հիմնական դժվարություններից է հանդիսանում ոռոգման ջրի բացակայությունը: Ջրի առկայությունը հնարավորություն կտար զարգացնել բանջարաբոստանային կուլտուրաներն այս բնակավայրերում:

Համայնքն ունի նաև կառուցապատման հետ կապված խնդիրներ, որոնք առաջացել են հատակագծի բացակայության և ոչ կանոնակարգված շինարարական աշխատանքների

[1]International Monetary Fund. 2016. World Economic Outlook. *World Economic and Financial Surveys.* Retrieved from: http://www.imf.org/external/pubs/ft/weo/2016/02/pdf/text.pdf.

պատճառով: Հատակագծի և համապատասխան շինարարական դրույթների բացակայությունը նաև պատճառ է դարձել գերեզմանատների անկանոն կառուցման համար:

Համայնքը նաև ունի գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման և իրացման խնդիր: Կան մսի և կաթի մեծ պաշարներ, որոնք ուղղակի այրվում կամ դեն են նետվում, քանի որ գյուղտնտեսները դրանք չեն կարողանում վերամշակել կամ վաճառել:

Իրացման խնդիրներից մեկն էլ այն է, որ գյուղատնտեսական արտադրանքը շատ հաճախ վաճառվում է գյուղացիների համար ոչ շահավետ գներով: Այս հանգամանքը հիմնականում պայմանավորված է գյուղատնտեսության ոլորտում դիվերսիֆիկացիայի բացակայությամբ: Քանի որ համայնքի բնակիչները հիմնականում զբաղված են ընդամենը մի քանի գյուղատնտեսական ապրանքի լայնածավալ արտադրությամբ, նրանք ստեղծում են իրենց հասանելի շուկայական պահանջարկին գերազանցող առաջարկ: Արդյունքում գյուղատնտեսության ոլորտի ձեռներեցները ստիպված են լինում իրենց արտադրանքը վաճառել նախատեսվածից ցածր գնով, որն էլ իր հերթին տալիս է ներդրված ներուժին ոչ համաչափ եկամուտ:

2.4 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Անասնապահության և բանջարաբոստարանային կուլտուրաների արտադրության ծավալների մեծացման զգալի ներուժ • Ընդարձակ արոտավայրերի առկայություն • բերրի վարելահողերի առկայություն,	• Համայնքի ենթակառուցվածքների (փողոցներ, ջրամատակարարման ցանցեր և այլն) ոչ բարվոք վիճակը, • Համայնքի բնակավայրերի տրանսպորտային համակարգի անբավարար վիճակը, • Գյուղատնտեսական ապրանքի համար անհրաժեշտ շուկաների հետ թույլ կապը
Հնարավորություններ	**Սպառնալիքներ**
• Ակնկալվում է դիզվառելիքի գնի նվազում: • Պետական ապակենտրոնացման քաղաքականության իրականացում	• Բնականտարերայինաղետներիհնարավորպատճառածվնասները (երկրաշարժ, հեղեղումներ, կարկտահարություն, սողանքներիառաջացում), • Արտագաղթը, հատկապեսերիտասարդներիշրջանում, • Համայնքին հարակից ազատագրված տարածքների կարգավիճակի փոփոխությունը, որոնք համայնքի անասնապահների համար օգտագործվում են որպես արոտավայրեր, • Մատչելի գնով գյուղատնտեսական ապրանքների ներկրումն արտերկրից:

3 Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

3.1 Համայնքի զարգացման տեսլական

Համայնքի զարգացման ծրագրերի իրականացման արդյունքում ուրվագծվող տեսլականն է ՝ նոր որակի 9 բնակավայրերով ստեղծված համայնքի միջավայրով ձևավորված բնակիչների, հարուստ ֆերմերների, հյուրերի և զբոսաշրջիկների համար առավել գրավիչ համայնք: Մատչելի և որակյալ գյուղատնտեսական արտադրանքներ ստեղծող համայնքաբնակներ:Մշակույթային ու մարզական հաստատություններով երիտասարդության ժամանցի կազմակերպման համար նպաստավոր պայմաններով: Համայնքաբնակների համար բարելավված կենցաղային և բնակարանային պայմաններով:Բարեկարգ , ասֆալտապատ և լուսավոր ներհամայնքային փողոցներ:Տիպային անասնագոմերով տեխնիկայի վերջին ճիչով վերազինված, աշխատանքով ապահոված երիտասրդներ: Արփի համայնքի ռազմավարական զարգացման հեռահար պատկերն է ապահովել համայնքի կայուն զարգացումը առաջիկա տարիների ընդացքում:Ծրագրերի միջոցով և հետևողականորեն ապահովել համայնքաբնակների սոցիալ-տնտեսական , առողջ ապրելակերպի և հանգստի պայմանները: Համայնքը դարձնել զբոսաշրջության, գյուղատնտեսության, ձկնաբուծության, ձեռնարկատիրական գործունեության համար գրավիչ տարածաշրջան: ՈՒԹՀՍ(SWOT) վերլուծության արդյունքում արտացոլվել է համայնքում առկա իրավիճակի, պոտենցիալի հնարավորությունները:Արփի համայնքի զարգացման ծրագրի պատկերներն են՝

1. Ստեղծել նոր որակի համայնք՝ որը կլինի օրինակելի ՀՀ-ում
2. Զարգացնել մշակույթային և մարզական կյանքը, երիտասարդության ներգրավմամբ
3. Զարգացնել գյուղատնտեսությունը
4. Զարգացնել զբոսաշրջությունը
5. Զարգացնել ՓՄՁ-ները, ստեղծել պայմաններ ներդրողների համար

3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

Համայնքի անմիջական նպատակներն են

1. Գործարար միջավայրի բարելավման միջոցով խթանել համայնքի բնակավայրերում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների թվի աճը և գյուղատնտեսական բնագավառում զբաղվածների աճը
2. ‘Գույքի կառավարման ծրագրին’ համապատասխան իրականացնել համայնքային գույքի և ֆինանսների կառավարումը
3. Նախադպրոցական կրթության , արտադպրոցական պարապմունքներում բարեկարգ և նպաստառու պայմաններ ապահովելով նախադպրոցական և արտադպրոցական պարապմունքների կազմակերպումն ու պարապմունքներ հաճախող երեխաների թվի աճը
4. Ապահովել Երիտասարդության ներգրավումը համայնքապետարանի կողմից բնակավայրերում կազմակերպվող մշակույթային միջոցառումներին և

այցելությունները համայնքից դուրս մշակույթային օջախներ՝ խթանելով ակտիվ մշակույթային և մարզական կյանքը
5. Սոցիալական ծրագրերի միջոցով խթանել համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը
6. Մարզական խմբակների ավելացման միջոցով խրախուսել երեխաներին ֆիսկուլտուրան և առողջ ապրելակերպը
7. Բնակիչներին բնակելի տներ կառուցելու նպատակով ստեղծել համայնքում բնակարանային շինարարության համար նպաստավոր պայմաններ
8. Ընդլայնելով կանաչապատ տարածքները բարեկարգելով ներհամայնքային փողոցները մասնագիտացված մեքենաներով իրականացնելով համայնքի բնակավայրերի աղբահանությունը և սանիտարական մաքրումը ապահովել համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը
9. Համայնքում ստեղծել կոմունալ տնտեսություն, որը կզբաղվի համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը կազմակերպելու աշխատանքները
10. Համայնքում բնակվող զինապարտ համայնքաբնակների գրանցամատյանի վարման միջոցով աջակցել պետության պաշտպանության իրականացմանը
11. Համայնքում քաղաքացիական շտաբի առկայության արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության բնագավառում համայնքաբնակների հմտությունների կատարելագործման նպատակով վարժանքների կամավորական փրկարար միավորումների ստեղծմամբ նպաստել աղետների ռիսկերի նվազեցմանը և արտակարգ իրավիճակներում բնակչության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումը
12. Հողերի կանոնավոր մշակմամբ և նպատակային օգտագործման, ոռոգման ցանցի առկայության միջոցով նոր տոհմային ցեղատեսակ անասունների առկայության միջոցով խթանել գյուղատնտեսության զարգացումը
13. Համայնքի շաբաթօրյակների և ծառատունկերի հաճախակի կազմակերպման միջոցով ապահովել շրջակա միջավայրի պահպանությունը
14. Սոցիալական ցանցերով, սեփական բլոկներով, ՁԼՄ-ներով պատմամշակույթային և բնական հուշարձանների վերաբերյալ տեղեկատվության տարածման, ինչպես նաև Արփի համայնքի ճանաչելիության բարձրացման նպատակով խթանել զբոսաշրջության զարգացումը
15. Համայնքի ֆինանսական միջոցներով ապահովել երիտասարդության խնդիրների լուծմանն ուղված ծրագրերի ու միջոցառումների կազմակերպումը
16. Աջակցելով համայնքի բյուջեյից համայնքում ծնելիության և բազմազավակության տեմպերի բարձրացմանը, խթանել 3 և ավելի երեխաներ ունեցող ընտանիքներին
17. Համայնքում բնակչության վստահության բարձրացման միջոցով խթանել բարեգործությունը՝ համայնքում մշակույթային, կրթական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման:

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

«Խմելու ջրի ջրագծերի մասնակի վերանորոգում»

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="6">Բնակչությանը սպասարկել էկոլոգիապես մաքուր ջուր</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ</td><td colspan="6">Ապահովել ջրագծերի պահպանությունն ու շահագործումը</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>Առկա է</td><td>առկա է</td><td>առկա է</td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td rowspan="9">Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td colspan="6">1. Փոխված ներհամայնքային ջրագծեր</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ կմ.</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>0.4</td><td>1.4</td><td>1</td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td colspan="6">2. Որակյալ և մաքուր ջուր</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>Առկա է</td><td>առկա է</td><td>առկա է</td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="6">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ
1.1.Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում.
1.2.Միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից ֆինանսական ներդրում.

2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ
2.1.Համայնքի բյուջեյի սեփական ներդրումների ապահովում.
2.2.Վերանորոգված և վերակառուցված ջրագիծ.</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="6">Ընթացիկ ծախսեր՝3.000.000
Կապիտալ ծախսեր՝39.000.000
Ընդհանուր բյուջեն՝42.000.000</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="6">Դոնոր կազմակերպություններ և պետբյուջե</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="6">Քաղաքական ընդվզումներ</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="6">Բնակիչներ</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="6">2016-2018թթ.</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="6"></td></tr>
</table>

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

«Համայնքի փողոցների լուսավորության ցանցի կառուցում»

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Համայնքաբնակների հասարակական կյանքի վտանգավոր երևույթների պահպանություն:</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ</td><td colspan="7">Ապահովել համայնքաբնակներին գիշերային ժամերին անվտանգ տեղաշարժ:</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>Առկա է</td><td>Առկա ՝</td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td rowspan="8">Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td colspan="7">1. Լուսավորված ներհամայնքային փողոցներ</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>Առկա է</td><td>Առկա է</td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td colspan="7">2. Համայնքի փողոցները լուսավորված են</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ կմ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>1.5</td><td>10</td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ
1.1.Լուսավոր փողոցներ
1.2.Լուսատուների ավելացում

2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ
2.1.Համայնքի ամբողջ տարածքը գիշերային ժամերին լուսավորված է
2.2.Համայնքաբնակների կյանքին վտանգ չի սպառնում</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝1.500.000
Կապիտալ ծախսեր՝10.000.000
Ընդհանուր բյուջեն՝ 11.500.000</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7">Ֆինանսական միջոցների հայթհայթում, դոնոր կազմակերպությունների բացահայտում:</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7">Ֆինանսական միջոցների բացակայություն</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Համայնքի բնակիչներ, ՓՄՁ-ներ</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">2016-2017թ.թ.</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">Երկարամյա անհետևողականության արդյունքում ներհամայնքային լուսավորության ցանցը ամբողջովին շարքից դուրս էր եկել և թալանվել: Համայնքներում գիշերային ժամերին փողոցներում տիրում էր խավար ու ահ ու սարսափ, համայնքի հարակից ձորերից համայնք էին ներթափանցում վայրի գազանները, որոն էլ արգելք էին հանդիսանում համայնքաբնակների ակտիվ տեղաշարժը գիշերային ժամերին: Նախատեսվում է հիմնական լուսավորության միջոցով բարելավել համայնքաբնակների շարժը գիշերային ժամերին:Նախատեսվում է կառուցել ներհամայնքային փողոցների լուսավորության ցանց 11500մ. Երկարությամբ:Լուսավորության ցանցի կառուցումից հետո կապահովվի համայքաբնակների անվտանգ տեղաշարժը համայնքի ներսում:</td></tr>
</table>

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

« **Ներհամայնքային փողոցների վերանորոգում մասնակի ասֆալտապատում**»

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="6">Համայնքի հասարակական տրանսպորտի անխափան երթևեկության կազմակերպում, համայնքային ճանապարհների պահպանություն և շահագործում:</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ</td><td colspan="6">Երթևեկելի դարձնել համայնքի բոլոր փողոցները</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>Առկա չէ</td><td>Առկա է</td><td>Առկա է</td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td rowspan="9">Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td colspan="6">1. Խճապատված ներհամայնքային ճանապարհներ</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ կմ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>0.7</td><td>1.014</td><td>1</td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td colspan="6">2. Բնակավայրերը մայրուղուն միացնող ասֆալտապատ ճանապարհներ</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>Առկա չէ</td><td>Առկա է</td><td>Առկա է</td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="6">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ
1.1.Խճապատված ներհամայնքային ճանապարհներ
1.2.Երթևեկելի ներհամայնքային փողոցներ

2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ
2.1.Ասֆալտապատել բնակավայրեր մտնող ճանապարհները
2.2.Անխափան երթևեկություն</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="6">Ընթացիկ ծախսեր՝5.000.000
Կապիտալ ծախսեր՝90.000.000
Ընդհանուր բյուջեն՝95.000.000</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="6">Դոնոր կազմակերպությունների բացահայտում, սեփական եկամուտների հավաքագրում:</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="6">Անբարենպաստ բնակլիմայական պայմաններ, ֆինանսական միջոցների բացակայություն:</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="6">Համայնքի բնակիչներ, բազմաթիվ հյուրեր</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="6">2016-2018թթ.</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="6">Երկարամյա շահագործման արդյունքում ներհամայնքային ճանապարհները ջրի և ձնհալի պատճառով ամբողջովին քանդվել են : Սելաֆաջրերը առաջացնելով փոսորակներ լցվում են անձրևաջրերով և անանցանելի են դարձնում ճանապարհները: Նախատեսվում է հիմնական խճապատման և ասֆալտապատման միջոցով բարեկարգել մայրուղուց բնակավայրեր մտնող ճանապարհները և համայնքային փողոցները, իրականացնել ջրահեռացման համակարգ: Նախատեսվում է ասֆալտապատել բնակավայրերը մայրուղուն կապող 1.8կմ երկարությամբ ճանապարհ, ասֆալտապատումից հետո կբարելավվի երթևեկությունը նշված ճանապարհահատվածներում,կավելանա ժամանակակից ավտոմեքենաների մուտքը համայնք:</td></tr>
</table>

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

« **Մանկապարտեզների վերանորոգում և շահագործում** »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի երեխաների ժամանակակից պատշաճ մանկություն, ուսումնդաստիրակչական աշխատանքների կազմակերպում:						
Ծրագրի անմիջական նպատակ	Ապահովել երեխաներին մանկապարտեզով, շենքի վերանորոգում և շահագործում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		Առկա է	Առկա է	Առկա է	Առկա է	Առկա է	
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Վերանորոգված և վերակառուցված մանկապարտեզ						
	Ցուցանիշներ %	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		25	50	75	90	100	
	2. Երեխաները հաճախում են վերանորոգված և կահավորված մանկապարտեզ						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		Առկա է	Առկա է	Առկա է	Առկա է	Առկա է	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1.Վերանորոգված մանկապարտեզ 1.2.Երեխաները հաճախում են մանկապարտեզ 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1.Համայնքի բնակավայրերում գործում են մանկապարտեզներ 2.2.Լուծվել է երեխաների ուսումնադաստիարակչական հարցերը						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝5.200.000 Կապիտալ ծախսեր՝40.000.000 Ընդհանուր բյուջեն՝45.200.000						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Բարերարների ներգրավում համայնքի խնդիրների լուծման համար, երեխաների ուսումնադաստիարակչական աշխատանքներով զբաղվող կազմակերպություններ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ֆինանսական միջոցների բացակայություն						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի 150 ընտանիքներ թվով 120 երեխաներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2016-2020թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Երկարամյա չշահագործման արդյունքում համայնքային սեփականություն հանդիսացող մանկապարտեզների շենքերը ֆինանսական սուղ միջոցներից ելնելով ամբողջովին շարքից դուրս են եկել:Առաջացած անմխիթար վիճակը և ոչ լիակատար շենքային պայմանները բացակայում են և թույլ չէին տալիս աշխատըեցնել նպատակային: Նախատեսվում է վերանորոգել և վերակառուցել համայնքային սեփականություն հանդիսացող մանկապարտեզների համար նախատեսված շենք շինությունները:Նախատեսվում է վերակառուցել, վերանորոգել և վերագործարկել թվով 4 համայնքային մանկապարտեզներ,վերանորոգումից և վերագործարկումից հետո կբարելավվի համայնքի մանկապարտեզները:						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

«Մշակույթի տան վերանորոգում»

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Համայնքի մշակույթային կյանքի զարթոնք,տարբեր տիպի խմբակների վերաբացում</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ</td><td colspan="7">Ապահովվել երիտասարդներին և երեխաներին մշակույթային,ազգային ավանդույթների պահպանում</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="6">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>Առկա է</td><td>Առկա է</td><td>Առկա է</td><td>Առկա է</td><td>Առկա է</td><td>Առկա է</td></tr>
<tr><td rowspan="9">Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td colspan="7">1. Համայնքի երկու բնակավայրերում գործում են մշակույթի տները</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="6">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>Առկա է</td><td>Առկա է</td><td>Առկա է</td><td>Առկա է</td><td>Առկա է</td><td>Առկա է</td></tr>
<tr><td colspan="7">2. Վերանորոգված և կահավորված մշակույթի տներում գործում են խմբակներ</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="6">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>Առկա է</td><td>Առկա է</td><td>Առկա է</td><td>Առկա է</td><td>Առկա է</td><td>Առկա է</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ
1.1.Վերանորոգված մշակույթի տանը գործում են երաժշտական խմբակներ
1.2.Երեխաները ու երիտասարդները մշակույթի տանը կազմակերպում են մեծարման երեկոներ

2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ
2.1.Հրավիրվում են համերգային խմբեր
2.2.Վերանորոգված մշակույթի տներում գործում են թաթերական ինքնագործ խմբեր</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝3.000.000
Կապիտալ ծախսեր՝52.000.000
Ընդհանուր բյուջեն՝55.000.000</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7">Մշակույթի և սպորտի նախարարության աջակցություն կադրերի վերապատրաստում,դոնոր կազմակերպությունների ֆինանսական աջակցություն</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7">Տարածաշրջանի միջազգային կառույցների ֆինանսական ներգրավում</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Համայնքի բնակիչներ</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">2016-2021թթ.</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">Հետխորհրդային տարիների ծաղկուն ժամանակաշրջանին գործող մշակույթի տների անգործության մատնվելու ֆինանսական միջոցներ բացակայության պատճառով ամբողջովին շարքից դուրս են եկել մշակույթի տները և անհետևանք էին մնացել շենքշինությունները,բացակայում են մշակույթի տներում խմբակների կազմակերպում, մշակույթային կյանքի զարգացում: Նախատեսվում է հիմնական վերանորոգման և վերազինման միջոցով բարելավել համայնքային մշակույթային կյանքը, կազմակերպել խմբակների վերագործարկում ,նախատեսվում է վերագործարկել համայնքային ենթակայության չորս մշակույթի տներ: Վերանորոգումից և վերագործարկումից հետո կակտիվանա մշակույթային կյանքը և կամրապնդվեն ազգային ավանդույթները համայնքի բնակավայրերում:</td></tr>
</table>

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

«Աղբահանություն»

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Համայնքի սանիտարահիգիենիկ պայմանների բարելավվում , մաքուր և բարեկեցիկ համայնք</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ</td><td colspan="7">Ապահովել համայնքի աղբահանության կազմակերպումը</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="6">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>Առկա է</td><td>Առկա է</td><td>Առկա է</td><td>Առկա է</td><td>Առկա է</td><td></td></tr>
<tr><td rowspan="9">Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td colspan="7">1. Աղբահանությունը կազմակերպվում է Արփի բնակավայրում</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="6">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>Առկա է</td><td>Առկա է</td><td>Առկա է</td><td>Առկա է</td><td>Առկա է</td><td></td></tr>
<tr><td colspan="7">2. Տեղադրված են աղբամաններ</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ քանակ/հատ/</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="6">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>10</td><td>30</td><td>50</td><td>60</td><td>60</td><td></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ
1.1.Ցանկապատված հատուկ հարթակներում տեղադրված է աղբամաններ
1.2.Յուրաքանչյուր բնակավայրում կկառուցվեն համապատասխան հարթակներ աղբամանների համար

2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ
2.1.Շաբաթական 2 անգամ կատարվում է աղբահանություն
2.2.Համայնքի բնակավայրերի փողոցներում չկա պոլիէթիլենային շշեր և տոպրակներ</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝600.000
Կապիտալ ծախսեր՝15.400.000
Ընդհանուր բյուջեն՝16.000.000</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7">Բնակչության մասնակցություն, ժամանակին կոմունալ վճարների հավաքագրում</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7">Բնակչության անհոգատար վերաբերմունքը</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Համայնքաբնակներ</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">2016-2020թթ.</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">Համայնքը գտնվում է բարձր լեռնային գոտում՝ համայնքաբնակների հիմնական զբաղմունքը հանդիսանում է անասնապահությունը և հողագործությունը:Բնակավայրերի կառուցումից ի վեր խորհրդային տարիների ընդացքում երբևիցէ չի իրականացվել աղբահանություն , աանհրաժեշտ չլինելու պատճառով, բայց ժամանակի փոփոխության հետ մեկտեղ արդեն իսկ անհրաժեշտություն է իրականացնել աղբահանություն, քանի որ քիմիական արտադրությունը լայն կերպով օգտագործվում է կենցաղում: Ավելացել են քիմիական թափոնները, որոնք էլ վտանգ են ներկայացնում բնակչության համար: Աղբահանության ծրագրի իրականացումից հետո բնակավայրերի փողոցներում չեն լինի քամու բերան ընկած պոլիէթիլենային տոպրակներ և շշեր:Կբարձրանա բնակավայրեր մաքրության մակարդակը :</td></tr>
</table>

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

« **Բնապահպանություն, կանաչապատում** »

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="6">Համայնքը գտնվելով 2000- 2300մ. բարձրության վրա բացակայում են դեկորատիվ ծառատեսակների քանակներ, որի բացակայության պատճառող խախտվում է էկոլոգիան</td></tr>
<tr><td rowspan="5">Ծրագրի անմիջական նպատակ</td><td colspan="6">Ապահովվել համայնքի բնակավայրերի կանաչապատումը</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>Առկա է</td><td>Առկա է</td><td>Առկա է</td><td>Առկա է</td><td>Առկա է</td><td></td></tr>
<tr><td rowspan="9">Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td colspan="6">1. Ծառատունկի կազմակերպում</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ հատ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>400</td><td>3000</td><td>3000</td><td>3000</td><td>3500</td><td>2300</td></tr>
<tr><td colspan="6">2. Բնակավայրերում կանաչապատվել են տարածքները</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ քմ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>400</td><td>3000</td><td>3000</td><td>3000</td><td>3500</td><td>2300</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="6">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ
1.1.Կանաչապատված տարածքներ
1.2.Տնկիների ոռոգման ցանցի կառուցում

2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ
2.1.Բարեխղճորեն ջրվում են տնկիները
2.2.Ավելացել են նորատունկ ծառերի քանակը</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="6">Ընթացիկ ծախսեր՝2.000.000
Կապիտալ ծախսեր՝10.000.000
Ընդհանուր բյուջեն՝12.000.000</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="6">Ֆինանսական միջոցներ,դոնոր միջազգային կազմակերպություն</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="6">Հրդեհներ</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="6">Տարածաշրջանի բնակիչներ և այցելուներ</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="6">2016-2021թթ.</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="6">Համայնքը գտնվելով բարձրադիր գոտում , կլիմայական պայմաններն լինելով խիստ բացակայում են կանաչապատ և անտառապատ տարածքները: Նախատեսվում է Արփի լճի մոտ իրականացնել կանաչապատում:</td></tr>
</table>

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

«Բազմամյա խոտաբույսերի ընդլայնում, տոհմային տարբեր ցեղատեսակի անասունների ավելացում »

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Կայուն կերի բազայի ստեղծում և տոհմային սորտի անասունների ներմուծում</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ</td><td colspan="7">Ապահովել համայնքաբնակներին բազմամյա խոտաբույսերի սերմերով</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ
հա</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>8</td><td>15</td><td>15</td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td rowspan="9">Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td colspan="7">1. Բազմայա խոտաբույսերի ցանքսատարածքներ</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>Առկա է</td><td>Առկա է</td><td>Առկա է</td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td colspan="7">2. Նոր տոհմային ցեղատեսակների ներմուծում</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>Առկա չէ</td><td>Առկա է</td><td>Առկա է</td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ
1.1.Բազմամյա խոտաբույսերի ցանքսատարածքներ
1.2.Տոհմային սորտի անասունների ներմուծում

2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ
2.1. 38 հա բազմամյա խոտաբույսերի ցանքսատարածքներ
2.2. 50 գլուխ տոհմային սորտի ցեղատեսակներ</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝500.000
Կապիտալ ծախսեր՝4.500.000
Ընդհանուր բյուջեն՝5.000.000</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7">Որակյալ սերմացուների ձեքբերում, տոհմային սորտի անասունների ձեռքբերում</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7">Միջազգային կազմակերպության առկայություն</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Ֆերմերներ (թվով 20)</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">2016-2018թթ.</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">Երկարամյա անարդյունավետ դաշտավարության և անասնապահության հետևանքով համայնքում գյուղատնտեսության ճյուղը համարվում է ոչ արդյունավետ: Ֆերմերները չունեն կայուն կերի բազա, որն էլ պատճառ է հանդիսանում ցածր կաթնատվության, մթերատվության և ավելի շատ ֆինանսական հոսքերի: Չունենալով բարձր կաթնատվության ցեղատեսակի անասուններ աննպատակ ավելացնում էին գլխաքանակը, սակայն միջազգային դոնոր կազմակերպությունների ջանքերով նախատեսվում է ավելացնել բազմամյա խոտաբույսերի ցանքատարածությունները 38 հա, և ներ մուծել բարձր կաթնատվության և մթերատվության 50 գլուխ անասուններ:
Ծրագրի ավարտից հետո կստեղծվի հուսալի կայուն կերի բազա, կավելանա կաթնատվությունը, կբարձրանա մթերատվությունը: Կավելանա ֆերմերների թիվը:</td></tr>
</table>

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

« Զբոսաշրջություն »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի պատմամշակույթային նոր հուշարձանների հայտնաբերում						
Ծրագրի անմիջական նպատակ	Ապահովել հուշարձանների ցուցանակների տեղադրում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		Առկա չէ	Առկա է	Առկա է	Առկա է	Առկա է	Առկա է
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Ցուցանակներում նշված հուշարձաններ						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		Առկա չէ	Առկա է	Առկա է	Առկա է	Առկա է	Առկա է
	2. Զբոսաշրջիկների այց նոր ցուցանակներով պատմամշակույթային վայրեր						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		Առկա չէ	Առկա է	Առկա է	Առկա է	Առկա է	Առկա է
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Ցուցանակների պատրաստում 1.2.Էլեկտրոնային բլոկների ստեղծում, համացանցում հուշարձանների անձնագրերի տեղադրում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Զբոսաշրջիկները այցելում են պատմամշակույթային վայրեր 2.2. Համայնքաբնակները ստանում են եկամուտներ զբոսաշրջությունից						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝1.000.000 Կապիտալ ծախսեր՝7.000.000 Ընդհանուր բյուջեն՝ 8.000.000						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	ՀՀ պատմամշակույթային ոլորտի մասնագետների ներգրավում, միջազգային դոնոր կազմակերպությունների բացահայտում						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ֆինանսական միջոցների բացակայություն						
Ծրագրի հիմնական շահառուները	Զբոսաշրջիկներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2016-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Երկարատև անհետևողականության արդյունքում համայնքային պատմամշակույթային արժեքները աբմողջովին կամ մասամբ շարքից դուրս են եկել : Անհետևողականությունը թույլ չի տալիս զբոսաշրջիկներին ուշադրություն դարձնել պատմամշակույթային կարևոևագույն հուշակոթողներին: Կավելանա համայնքաբնակների եկամուտները զբոսաշրջիկների հաշվին						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

«Համայնքի դաշտամիջյան ճանապարհների վերանորոգում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի խոտհունձի աշխատանքների կազմակերպում, խոտով բարձված մեքենաների անվթար տեղաշարժ, տեխնիկայի արդյունավետ և անխափան տեղափոխում						
Ծրագրի անմիջական նպատակ	Ապահովել ճանապարհային ենթակառուցվածքների պահպանությունն ու շահագործումը						
	Ցուցանիշներ կմ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		Առկա է	Առկա է	Առկա է	Առկա է	Առկա է	Առկա է
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Հարթեցված դաշտամիջյան ճանապարհներ						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		Առկա է	Առկա է	Առկա է	Առկա է	Առկա է	Առկա է
	2. Փոսալցված և նոր կառուցված ճանապարհներ						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		Առկա է	Առկա է	Առկա է	Առկա է	Առկա է	Առկա է
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Հարթեցված և բարեկարգ դաշտամիջյան ճանապարհներ 1.2. Առուների վրա կամրջակների կառուցում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Ֆերմերներն երթևեկում են հեռագնա արոտներ բարեկարգված դաշտամիջյան ճանապարհներով 2.2. Խոտով բարձված մեքենաներն անվտանգ և ապահով տեղափոխում են խոտը						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 500.000 դրամ Կապիտալ ծախսեր՝ 7.500.000 դրամ Ընդհանուր բյուջեն՝ 8.000.000 դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Բուլդոզերներ, սեփական ֆինանսական միջոցներ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Բնակլիմայական աղետներ /ջրհեղեղներ, սելաֆներ/						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքաբնակներ, ֆերմերներ, զբոսաշրջիկներ և այլ այցելուներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թ.թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	90-ական թվականներից ի վեր համայնքի դաշտամիջյան ճանապրհներն անձրևաջրերի և ձնհալի պատճառով ամբողջովին շարքից դուրս են եկել: Առաջացած փոսորակներն անանցանելի են դարձնում խոտով բարձված մեքենաների և գյուղգործիքների տեղափոխման համար նախատեսվում է հիմնական հարթեցման ու փոսալցման միջոցով բարեկարգել դաշտամիջյան ճանապարհները, իրականացնել սելաֆաջրերի պատնեշների կառուցում, նախատեսվում է հարթեցնել 127կմ երկարությամբ դաշտամիջյան ճանապարհ: Հարթեցումից և փոսալցումից հետո կբարելլավվի անխափան երթևեկությունը դաշտամիջյան ճանապարհներով, կխնայվի մեծ քանակությամբ վառելանյութ և գյուղգործիքները շուտ շարքից դուրս չեն գա:						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

«Տեխնիկայի վերազինում և ապահով կայանատեղի»

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Արփի համայնքում ‘ՀՏՋՀ’ ծրագիր շրջանակներում ձեռք բերվող հացահատիկահավաք 2 կոմբայնների ապահով կայանատեղի</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ</td><td colspan="7">Ապահովել կոմբայնները կոռոզիայից</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="6">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td>Առկա է</td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td rowspan="8">Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td colspan="7">1. Ապահով ժամանակակից տեխնիկայով հագեցած կայանատեղի</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="6">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td>Առկա է</td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td colspan="7">2. Հացահատիկահավաք գյուղտեխնիկաները կայանված են ապահով և նոր կառուցված կայանատեղում</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="6">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td>Առկա է</td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ
1.1. Կառուցել ժամանակակից կայանատեղի ծվագրով նախատեսված տեխնիկայի համար
1.2. Կառուցվել է 400քմ. կայանատեղի , որակյալ շինանյութով

2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ
2.1.Կայանատեղին հագեցված է ժամանակակից սարքավորումներով
2.2. Բերքահավաքից հետո տեխնիկաները սարքին և մաքուր վիճակում կայանված են կայանատեղում</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝ 1.000.000 դրամ
Կապիտալ ծախսեր՝ 9.000.000 դրամ
Ընդհանուր բյուջեն՝ 10.000.000 դրամ</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7">Ֆինանսական միջոցներ</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7">Որակյալ մասնագետներ նախահաշվանախագծային փաստաթղթերի մշակման համար</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Համայնքաբնակներ, ֆերմերներ, հարևան համայնքներ</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">2017թ.</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">Նախատեսվում է ծրագրով համայնքի համար ձեռք բերել 2 միավոր տեխնիկա՝ ‘հացահատիկահավաք կոմբայններ’:Որպեսզի ժամանակից շուտ չծերանան և չմնան առանց ծածկի եղանակային քմահաճ պայմաններում, նախատեսվում է տեխնիկայի համար կառուցել նոր շինություն՝ նավես ծածկով, և կախովի կոունկով(տելֆեր), արդյունքում կունենանք միշտ տեսքով , ոչ քայքայված դետալներով կոմբայններ:</td></tr>
</table>

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

Անասնապահության ոլորտում բարեփոխումների իրականացում

Պարտադիր խնդիր(ներ), որի լուծմանն է միտված ծրագիրը	Գյուղական բնակավայրեր ընդգրկող համայնքում գյուղատնտեսության զարգացման խթանում, Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացում:						
Ծրագրի միջանկյալ արդյունքենր	1. Արհեստականորեն սերմանվորվող կենդանիների չափաբաժնի ավելացում						
	Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Արհեստականորեն սերմնավորվող կենդանիների չափաբաժինը	30%	40%	50%	60%	70%	80%
	2.Համայնքի արոտների գերարածեցման ծավալների նվազում						
	Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Գերարածեցված արոտների չափաբաժինը	35%	25%	15%	5%		
	3. բնակավայրին հարակից արոտներում անհրաժեշտ խմոցների առկայություն						
	Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Առկա խմոցների թվի հարաբերությունը անհրաժեշտ խմոցների թվին՝ արտահայտված տոկոսով	70%	70%	80%	100%		
Ծրագրի հիմնական գործողությունները	Արհեստականորեն սերմանվորվող կենդանիների չափաբաժնի ավելացում 1. Արհեստական սերմնավորման դրական կողմերի մասին համայնքի անասնապահներին տեղեկության տրամադրում, 2. Լայնածավալ արհեստական սերմնավորման գրաֆիկի ստեղծում Համայնքի արոտների գերարածեցման ծավալների նվազում 1. Համայնքի վարչական տարածքում կենդանիների համակարգված շարժի ապահովում: բնակավայրին հարակից արոտներում անհրաժեշտ խմոցների առկայություն 1. Խմոցների կառուցման համար անհրաժեշտ չափումների կատարում, 2. Շինարարական աշխատանքների իրականացում						
Ծրագրի բյուջեն	80,000,000 ՀՀ դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկեր							
Ծրագրի հիմնական շահառուներ	Ծրագրի հիմնական շահառուներն են հանդիսանում համայնքի՝ անասնապահությամբ զբաղվող բնակիչները:						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						

4. ՀՀԶԾ ֆինանսավորում

Համայնքի զարգացման ծրագրերը իրականացնելու նպատակով առաջին հերթին ապավինել սեփական միջոցներին, կարողանալ լավ գովազդել,համայնքը կոնկրետ ծրագրերի ֆինանսավորման համար նախատեսում է համագործակցել ՀՀ-ում գործող տարբեր հիմնադրամների, բարերարների, միջազգային դոնոր կազմակերպությունների հետ:

5. ՀՀԶԾմոնիթորինգ

ՀՀԶԾ-ի իրականացման տարեկան կամ հնգամյա գնահատումը կատարվում են համատեղ: Համայնքի ղեկավարը կազմակերպում և անցկացնում է ՀՀԶԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության աշխատանքային քննարկումներ, ՀՀԶԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության նախագծի հանրային բաց լսումներ և քննարկումներ՝ հատուկ ուշադրություն դարձնելով ծրագրերի ու միջոցառումների իրականացման հարցերին:

ՀՀԶԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության նախագծի կազմման, քննարկման և որոշման կայացման վերաբերյալ ընթացակարգերը նույնությամբ վերաբերում են նաև ՀՀԶԾ-ի իրականացման հնգամյա հաշվետվության նախագծի կազմմանը, քննարկմանը և որոշման կայացմանը:

ՀՀԶԾ-ի վերահսկողությունն ապահովում է ՀՀԶԾ-ում ներառված ծրագրերի ամբողջական իրականացումը, ռեսուրսների արդյունավետ օգտագործումն առաջադրված խնդիրները կատարելու, ակնկալվող արդյունքները ձեռք բերելու և սահմանված նպատակներին հասնելու համար, ծրագրերի պաշտպանվածությունը սխալներից ու ձախողումներից, ժամանակին ու ճիշտ տեղեկատվության ստացումը ՏԻՄ-երի ավելի հիմնավորված որոշումների կայացման համար:

6. Եզրափակում

Արփի համայնքի սույն զարգացման հնգամյա ծրագիրը իրականացվելու է համայնքի ՏԻՄ-երի, աշխատակազմի համայնքային ենթակայության կազմակերպությունների, համայնքի բնակիչների մասնակցությամբ:

Համայնքի 2017-2021թթ. ՀՀԶԾ-ն ամբողջական ծավալով իրականացնելու հարցը մեծապես կախված կլինի համայնքի առաջիկա հինգ տարիների բյուջեներում նախատեսվող մուտքերի (հատկապես՝ սեփական) փաստացի կատարման մակարդակից, ինչպես նաև դրանց խնայողաբար ու արդյունավետ ծախսումից:

ՀՀԶԾ-ի իրականացումը շատ բանով պայմանավորված կլինի նաև այն բանից, թե համայնքի ՏԻՄ-երին ինչքանով կհաջողվի նպատակային և արդյունավետ համագործակցություն ծավալել ՀՀ պետական կառավարման համապատասխան մարմինների, ՀՀ-ում (մասնավորապես՝ ՀՀ Շիրակի մարզում) գործող միջազգային և տեղական դոնոր, ՔՀՄՀ կազմակերպությունների և խմբերի, գործարարների հետ՝ համայնքային տնտեսությունում ապահովելու ՀՀԶԾ-ով պլանավորված ներդրումները և միջոցները: